ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի դեկտեմբերի 23-ի, ժամը 12:00-ի ընդլայնված նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Ֆինանսական հաշվառման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Աշմատի Հակոբյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Անուշ Աշոտի Գասպարյանի «Հաշվապահական հաշվառումը առևտրային բանկերում»** խնդրագրքի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. ներկայացված խնդրագրքում առաջին անգամ գործնական խնդիրների միջոցով դիտարկվում են բանկային հաշվառման առանցքային հարցեր: Ներկայացված են ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի դրույթների կիրառման առանձնահատկությունները, ներառված են առևտրային բանկերում իրականացվող գործառնությունների հաշվառման կիրառական, ինչպես նաև առևտրային բանկերի և իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև փոխհարաբերությունների կարգավորման հարցերը: Հաշվային պլանին համապատասխան տիպային թղթակցությունների ներկայացումը, խնդիրների հստակ շարադրանքը, տրամանաբական հաջորդականությունը թույլ են տալիս մատչելի դարձնել առարկայի յուրացումը: Օգտագործվող տերմինները, հասկացությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին, ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերին: Խնդրագիրքը կարող է դիտարկվել որպես տնտեսագիտական կրթություն ստացող ուսանողների համար տեսական գիտելիքի գործնական ապահովման կարևոր բաղադրիչ;

Խնդրագրքի վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Ա.Մ.Գալստյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

2) Ս.Ռ.Զաքինյան՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ ֆինանսական տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

3) Լ.Հ.Գրիգորյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված խնդրագիրքն ունի գործնական նշանակություն, նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների և ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար, համահունչ է ոլորտի զարգացման ժամանակակից մարտահրավերներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, ֆինանսական հաշվառման ամբիոնի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ ֆինանսական հաշվառման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Աշմատի Հակոբյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Անուշ Աշոտի Գասպարյանի «Հաշվապահական հաշվառումը առևտրային բանկերում»** խնդրագիրքը երաշխավորել հրատարակության՝ հեղինակի միջոցներով, 150 օրինակ տպաքանակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան